ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.08.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/62

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալոյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 282.110.06808),

«Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Մկրտչյանի (լիազորագիր, տրված՝ 10.07.2020թ.),

Հանրապետության նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ

Հ. Խաչատրյանի (լիազորագիր, տրված՝ 14.07.2020թ.),

քննելով Հանրապետության նախագահի աշխատակազմի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 08.07.2020թ. ներկայացված (09.07.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 08.07.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հանրապետության նախագահի աշխատակազմի կարիքների համար՝ «կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացումը եղել է www.armeps.am համակարգի միջոցով 22 հունիսի 2020 թվականին ժամը 10:00-ին:

Համաձայն ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով ընթացակարգի հրավերի հայտարարության տեքստի՝ ընթացակարգի քարտուղարը Հայկ Խաչատրյանն է, սակայն ըստ ընթացակարգի բացման և գնահատման նիստերի 22.06.2020թ. թիվ 2, 24.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4, 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների՝ Հայկ Խաչատրյանը նիստերին չի եղել, իսկ վերոնշյալ արձանագրություններում և շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը ստորագրել է քարտուղարին փոխարինող Սյուզաննա Սարգսյանը:

03.07.2020թ. www.gnumner.am կայքում հրապարակված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն Ընթացակարգի քարտուղարը հանդիսանում է Հայկ Խաչատրյանը:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքը, մասնավորապես.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

Քարտուղարը՝

1) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

2) ստանում և հաշվառում է հայտերը.

3) կազմում և հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս հաստատմանը ենթակա փաստաթղթերի նախագծերը.

4) տրամադրում է հրավեր.

5) համապատասխան փաստաթղթեր կազմելով՝ գրառում է հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը.

6) կազմակերպում է գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման աշխատանքները.

7) պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար.

8) իրականացնում է իրեն վերապահված այլ գործառույթներ:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ Հրավերը պետք է պարունակի՝ գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը, տեղեկություններ մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարի անունը և ազգանունը.

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գնահատող հանձնաժողովի՝

1) կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է

ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն.

2) գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ.

Բողոքի վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, Հանրապետության նախագահի աշխատակազմի կարիքների համար՝ «կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջի համաձայն նշվել է ընթացակարգի քարտուղարի անունն ու ազգանունը՝ Հայկ Խաչատրյան, սակայն դրանից հետո Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին համապատասխան ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղար նշանակված Հայկ Խաչատրյանի փոխարեն բացման և գնահատման նիստին(եր)՝ 22.06.2020թ. թիվ 2, 24.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4, 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների համաձայն ներկայացել է այլ անձնավորություն՝ Սյուզաննա Սարգսյանը, իսկ վերոնշյալ արձանագրություններում նշվել է, որ վերջինս հանդիսանում է քարտուղարին փոխարինող, իսկ Օրենքը և Կարգը քարտուղարին փոխարինողի պարտականությունների և լիազորությունների մասին սահմանում չունի, ինչը առկա է քարտուղարի պարագայում:

Ինչպես նաև 03.07.2020թ. gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման մեջ նշված է, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարը Հայկ Խաչատրյանն է և պայմանագիր կնքելու որոշումը այս պահի դրությամբ հանդիսանում է ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի վերջին հրապարակված փաստաթուղթը:

Ստացվում է 12.06.2020թ. gnumner.am կայքում հրապարակված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով ընթացակարգի քարտուղարը Հայկ Խաչաչատրյանն է, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով, դրանից հետո բացման և գնահատման նիստին(եր) ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգը քարտուղար չի ունեցել, այլ եղել է քարտուղարին փոխարինող՝

համաձայն 22.06.2020թ. թիվ 2, 24.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4, 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների և քարտուղարի մասին նշումը առկա է վերջում՝ 03.07.2020թ. gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման մեջ:

Վերոնշյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է կրկին անցկացնի բացման և գնահատման նիստ(եր)՝ Օրենքի և Կարգի պահանջներին համապատասխան, քանի որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի բացման և գնահատման նիստը(եր) իրավազոր չեն և չեն համապատասխանում Օրենքի և Կարգի պահանջներին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1.Դադարեցնել հանձնաժողովի 22.06.2020թ. թիվ 2, 24.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4, 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների համաձայն ընդունված որոշումները:

2.Դադարեցնել հանձնաժողովի՝ www.gnumner.am կայքում 03.07.2020թ. հրապարակված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն Հանրապետության նախագահի աշխատակազմի դիրքորոշման՝ Հանրապետության նախագահի աշխատակազմում գնումների համակարգող է սահմանված աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժինը, իսկ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար է նշանակվել վերոնշյալ բաժնի պետ Հայկ Խաչատրյանը: 2020 թվականի հունիսի 22-ից մինչև հուլիսի 7-ը արձակուրդում գտնվելու ընթացքում Հայկ Խաչատրյանին հրամանով փոխարինել է նույն բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Սյուզաննա Սարգսյանը», իսկ 16 հունիսի 2020թ. Հ-123-Ա հրամանը Հայկ Խաչատրյանին արձակուրդ տրամադրելու մասին է և հրամանի 2-րդ կետով ընդամենը ասվում է, որ արձակուրդում գտնվելու ընթացքում Հ. Խաչատրյանին կփոխարինի Հանրապետության

նախագահի աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Սյուզաննա Սարգսյանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումների համակարգող, որը իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:

Նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից ակնհայտ է, որ թե գնահատող հանձնաժողովը և թե գնահատող հանձնաժողովի քարտուղարը նշանակվում և իրենց լիազորությունների կատարմանն են անցնում պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտի՝ հրամանի հիման վրա: Այսինքն պատվիրատուի ընդունած հրամանը՝ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին, հանդիսանում է գնումները համակարգողի համար ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարի լիազորությունները կատարելու պարտականություն սահմանող միակ և բացառիկ իրավական ակտը:

Այսպիսով ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանում (քարտուղարի լիազորությունները կատարելու պարտականություն սահմանող միակ և բացառիկ իրավական ակտում) փոփոխություն չի արվել, իսկ եթե արված լիներ, ապա ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում պետք է կատարվեր քարտուղարի փոփոխություն, քանի որ Հայկ Խաչատրյանին արձակուրդ տրամադրելու մասին Հ-123-Ա հրամանը տրվել է Հայտերի ներկայացման վերջնաժամկետը (22 հունիսի 2020թ.) լրանալուց հինգ օրացուցային օր առաջ (16 հունիսի 2020թ.) (Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ Հրավերը պետք է պարունակի՝ գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը, տեղեկություններ մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարի անունը և ազգանունը և Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ... »:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.07.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է տնօրենի և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>Հանրապետության նախագահի աշխատակազմի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 09.07.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/10304-2020 գրության՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տրամադրում ենք անհրաժեշտ փաստաթղթերը: Միաժամանակ հայտնում ենք, որ Հանրապետության նախագահի աշխատակազմում գնումների համակարգող է սահմանված աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժինը, իսկ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար է նշանակվել վերոնշյալ բաժնի պետ Հայկ Խաչատրյանը: 2020 թվականի հունիսի 22-ից մինչև հուլիսի 7-ը արձակուրդում գտնվելու ընթացքում Հայկ Խաչատրյանին հրամանով փախարինել է նույն բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Սյուզաննա Սարգսյանը: Ըստ այդմ՝ նշված ժամանակահատվածում Սյուզաննա Սարգսյանը իրականացրել է ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները»:

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 15.07.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/10565-2020 գրության՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տրամադրում ենք անհրաժեշտ փաստաթղթերը: Միաժամանակ հայտնում ենք, որ Հանրապետության նախագահի աշխատակազմում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատվիրատուի ղեկավարի լիազորությունները վերապահված են Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խաչատուր Պողոսյանին, իսկ Սյուզաննա Սարգսյանի տվյալները ներառված են http://gnumner.am/hy/page/gnumneri hamakargoghneri vorakavorum1 հղումով

հրապարակված՝ գնումների համակարգողի որակավորում ստացած անձանց ցուցակում (2014 թվականի աշխատակիցների /ՀՀՔԾԽ/ ցուցակի 15-րդ տողում)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.07.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հանրապետության նախագահի աշխատակազմի կարիքների համար կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են 12.06.2020թ.:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 11-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել է գնանշման հարցման մասին հայտարարության տեքստը, որտեղ նշված է, որ սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2020թ. նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ արձանագրությունը ստորագրվել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանի կողմից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. թիվ 2, 25.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4 և 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների համաձայն՝ արձանագրությունները ստորագրվել են գնահատող հանձնաժողովի քարտուղարին փոխարինող Սյուզաննա Սարգսյանի կողմից:

5. 03.07.2020թ. www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, որտեղ նշվել է, որ սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկաություններ ստանալու համար կարող եք

դիմել ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գտնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանին:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ի 08.07.2020թ. ներկայացված բողոքը՝ կից նյութերով, Հանրապետության նախագահի աշխատակազմի գրությունները՝ կից նյութերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

3. Պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումների համակարգող, որը՝

1) պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար.

2) եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ.

3) իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները.

4) կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը:

4. Գնումների համակարգող կարող են սահմանվել պատվիրատուի՝

1) համապատասխան ստորաբաժանումը.

2) պաշտոնատար անձը կամ անձինք.

3) հրավիրած անձը՝ խորհրդատուն կամ խորհրդատուները:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ ***պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով***...:

Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով:*** Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

Քարտուղարը՝

1) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

2) ստանում և հաշվառում է հայտերը.

3) կազմում և հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս հաստատմանը ենթակա փաստաթղթերի նախագծերը.

4) տրամադրում է հրավեր.

5) համապատասխան փաստաթղթեր կազմելով՝ գրառում է հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը.

6) կազմակերպում է գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման աշխատանքները.

7) պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար.

8) իրականացնում է իրեն վերապահված այլ գործառույթներ:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի՝ գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը, տեղեկություններ մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարի անունը և ազգանունը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ***գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝ գնումները համակարգողը***:

Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ սահմանվում է, որ ***պատվիրատուի ղեկավարը՝*** օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝

ա. մարմնում գլխավոր քարտուղարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, որտեղ պատվիրատուի ղեկավարը ***կարող է լինել աշխատակազմի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձը:***

Այսպիսով՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի գնման գործընթացների պատասխանատուներ սահմանելու և Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 2018թ. դեկտեմբերի 12-ի Հ-378-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 20.01.2020թ. Հ-6-Ա հրամանի 2-րդ կետի համաձայն՝ աշխատակազմի գնումների համակարգող է սահմանվել աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժինը:

Նույն հրամանի քաղվածքի համաձայն՝ քարտուղար է նշանակվել ՖՎ ԳԲ պետ Հայկ Խաչատրյանը:

Հանրապետության նախագահի աշխատակազմի կարիքների համար կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են 12.06.2020թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 11-ի թիվ 1 որոշմամբ հաստատված գնանշման հարցման մասին հայտարարության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղար է հանդիսանում Հայկ Խաչատրյանը:

Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 16.06.2020թ. Հ-123-Ա Հայկ Խաչատրյանին արձակուրդ տրամադրելու մասին հրամանի 1-ին կետով սահմանվել է, որ Հանրապետության նախագահի աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժնի պետ Հայկ Խաչատրյանին տրամադրել 2020-2021 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը՝ 2020 թվականի հունիսի 22-ից մինչև հուլիսի 7-ը ներառյալ:

Նույն հրամանի 2-րդ կետով սահմանվել է, որ արձակուրդում գտնվելու ընթացքում Հ. Խաչատրյանին կփոխարինի Հանրապետության նախագահի աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժնի մասնագետի պաշտոնակատար Սյուզաննա Սարգսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2020թ. նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ արձանագրությունը ստորագրվել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. թիվ 2, 25.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4 և 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների համաձայն՝ արձանագրությունները ստորագրվել են գնահատող հանձնաժողովի քարտուղարին փոխարինող Սյուզաննա Սարգսյանի կողմից:

03.07.2020թ. www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, որտեղ նշվել է, որ սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գտնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 15.07.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/10565-2020 գրությամբ դիմել է Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին՝ խնդրելով հայտնել հետևյալը.

«Ով է հանդիսանում պատվիրատուի ղեկավար, ինչպես նաև տրամադրել ստորև ներկայացված տեղեկատվությունը.

- Հանրապետության Նախագահի աշխատակազմի կարիքների համար՝ «Կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի քարտուղար նշանակելու վերաբերյալ հանձնաժողովի կազմավորման մասին ակտի պատճեն:
- Գնումների որակավորված համակարգողների ցուցակում Հանրապետության նախագահի աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Սյուզաննա Սարգսյանի ընդգրկված լինելու վերաբերյալ համապատասխան տվյալներ»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ Հանրապետության Նախագահի աշխատակազմը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տրամադրում ենք անհրաժեշտ փաստաթղթերը: Միաժամանակ հայտնում ենք, որ Հանրապետության նախագահի աշխատակազմում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ***պատվիրատուի ղեկավարի լիազորությունները վերապահված են Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խաչատուր Պողոսյանին***, իսկ Սյուզաննա Սարգսյանի տվյալները ներառված են http://gnumner.am/hy/page/gnumneri hamakargoghneri vorakavorum1 հղումով հրապարակված՝ գնումների համակարգողի որակավորում ստացած անձանց ցուցակում (2014 թվականի աշխատակիցների /ՀՀՔԾԽ/ ցուցակի 15-րդ տողում)»:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակելու, այնուհետև փոփոխելու վերաբերյալ գործողությունները, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

3. ***Պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումների համակարգող***, որը՝

1) պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար.

2) եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ.

3) իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները.

4) կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը:

4. Գնումների համակարգող կարող են սահմանվել պատվիրատուի՝

1) համապատասխան ստորաբաժանումը.

2) պաշտոնատար անձը կամ անձինք.

3) հրավիրած անձը՝ խորհրդատուն կամ խորհրդատուները:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ ***Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով***...:

Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով:*** Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

Քարտուղարը՝

1) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

2) ստանում և հաշվառում է հայտերը.

3) կազմում և հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս հաստատմանը ենթակա փաստաթղթերի նախագծերը.

4) տրամադրում է հրավեր.

5) համապատասխան փաստաթղթեր կազմելով՝ գրառում է հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը.

6) կազմակերպում է գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման աշխատանքները.

7) պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար.

8) իրականացնում է իրեն վերապահված այլ գործառույթներ:

Կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ***գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝ գնումները համակարգողը***:

Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ սահմանվում է, որ ***պատվիրատուի ղեկավարը՝*** օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝

ա. մարմնում գլխավոր քարտուղարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, որտեղ պատվիրատուի ղեկավարը ***կարող է լինել աշխատակազմի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձը:***

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլ նաև

մասնակիցների «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը, օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս կազմավորման ձևը և գործառույթները:

Վերը նշված կարգավորումների համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարն է սահմանում գնումների համակարգող, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով:

Այսպիսով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ առկա չէ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին փոխարինելու մասին պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Սյուզաննա Սարգսյանը սույն ընթացակարգի շրջանակներում իրավասու չէր հանդես գալու որպես գնահատող հանձնաժողովի քարտուղարին փոխարինող և իրականացնելու վերջինիս լիազորությունները՝ ստորագրելով նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. թիվ 2, 25.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4 և 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունները:

Միաժամանակ արձանագրում եմ, որ 03.07.2020թ. www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, որտեղ նշվել է, որ սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գտնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանին, մինչդեռ Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 16.06.2020թ. Հ-123-Ա՝ Հայկ Խաչատրյանին արձակուրդ տրամադրելու մասին հրամանի 1-ին կետով սահմանվել է, որ Հանրապետության նախագահի աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժնի պետ Հայկ Խաչատրյանին տրամադրել 2020-2021 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը՝ 2020 թվականի հունիսի 22-ից ***մինչև հուլիսի 7-ը ներառյալ***, հետևաբար գտնում եմ, որ 03.07.2020թ. դրությամբ Հայկ Խաչատրյանի արձակուրդում գտնվելու պայմաններում պայմանագիր կնքելու մասին հայտարարության մեջ որպես գնահատող հանձնաժողովի քարտուղար վերջինիս նշելը ևս իրավաչափ չէ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից թույլ են տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի վկայակոչված՝ գնումների համակարգող սահմանելու (փոփոխելու) և կազմավորելու համար սահմանող պահանջների խախտումներ, հետևաբար նման պայմաններում գտնում եմ, որ «Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 08.07.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. Դադարեցնել հանձնաժողովի 22.06.2020թ. թիվ 2, 25.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4, 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների համաձայն ընդունված որոշումները:

2. Դադարեցնել հանձնաժողովի՝ www.gnumner.am կայքում 03.07.2020թ. հրապարակված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**